ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 1027-Լ	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Հրապարակվել է 04.07.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	04.07.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	04.07.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.07.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2024 թվականի N 1027-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մարզերում դպրոցահասակ երեխաների առողջ ապրելակերպի խրախուսման փորձնական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հուլիսի 4-ի N 1027-Լ որոշման

Փ Ո Ր Ձ Ն Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋ

ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

1. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Դպրոցահասակ երեխաների առողջ ապրելակերպի խրախուսման փորձնական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) նպատակ ունի դպրոցահասակ երեխաների շրջանում խթանել առողջ ապրելակերպը, նրանց ներգրավել լող մարզաձևի ուսուցման, զարգացման և սպորտի մեծ նվաճումների գործընթացում:

2. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության մարզերում տեղակայված լողավազաններում դպրոցահասակ երեխաների համար լողի ուսուցում կազմակերպելու միջոցով:

3. Ծրագրի մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) Հայաստանի Հանրապետության մարզերում տեղակայված հանրակրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ հաստատություն).

3) Հայաստանի Հանրապետության մարզերում լողավազաններ ունեցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ իրավաբանական անձինք):

4. Ծրագրի շահառուներ են հաստատությունների 8-ից մինչև 17 տարեկան աշակերտները:

5. Իրավաբանական անձանց ընտրությունը նախատեսվում է իրականացնել նախարարության կողմից հայտարարված մրցութային դրամաշնորհի միջոցով, որին մասնակցելու պայման պետք է հանդիսանա՝

1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի մայիսի 17-ի «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 534-Ն հրամանի պահանջներին բավարարող լողավազանի օգտագործման իրավունքի առկայությունը.

2) մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող մարզիչ-մանկավարժների առկայությունը:

6. Լողավազաններում դպրոցահասակ երեխաների համար լողի ուսուցումը նախատեսվում է իրականացնել 2 տարիքային խմբերի համար. 1-ին խմբում ընդգրկվում են ներառյալ 8-12 տարեկան երեխաները, 2-րդ խմբում՝ ներառյալ 13-17 տարեկանները:

7. 1-ին խմբում պարապողների առավելագույն քանակը 12-ն է, իսկ 2-րդ խմբում՝ 10-ը:

8. Ուսուցումը նախատեսվում է անցկացնել շաբաթական 3 օր՝ յուրաքանչյուր պարապմունքը 1 ժամ տևողությամբ:

9. Ուսումնամարզական գործընթացն իրականացվելու է նախարարության կողմից հաստատված ուսումնական ծրագրով:

10. Ծրագրի շահառուների ընտրությունը նախատեսվում է իրականացնել բաց հայտարարության միջոցով, որին կարող են դիմել տվյալ լողավազանի տեղակայման բնակավայրում բնակվող և հանրակրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ հաճախող տվորողները: Դիմումների ընդունումը իրականացվելու է էլեկտրոնային եղանակով: Շահառուների ընդգրկումը կիրականացվի ըստ դիմելու հերթականության:

11. Հայտավորված, սակայն տույն ծրագրի 10-րդ կետում նշված խմբերում չներառված երեխաների համար նախատեսվում է ձևավորել «սպասման» խումբ: Ընդ որում, տույն ծրագրի 10-րդ կետում նշված խմբերում ընդգրկված երեխաների կողմից 1 տարվա ընթացքում լողի 3-րդ պատանեկան կարգի նորմատիվային պահանջները չկատարելու, կամ 2 ամսվա ընթացքում առնվազն 4 պարապմունքների չմասնակցելու դեպքում վերջիններս կզրկվեն տույն ծրագրից օգտվելու հնարավորությունից, իսկ նրանց փոխարեն խումբը կհամալրվի «սպասման» խմբում ընդգրկված երեխաներից:

12. Խմբերի հետ աշխատող մարզիչ-մանկավարժների կողմից ուսումնամարզական գործընթացը թերի կազմակերպելու դեպքում նրանց կփոխարինեն տվյալ կազմակերպության այլ մարզիչ-մանկավարժներ:

13. Ծրագրի մոնիտորինգն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև ծրագրի 10-րդ և 11-րդ կետերի կատարումն ապահովելու նպատակով նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային հարթակ, որի վարումը կիրականացնի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կրթության կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով:

14. Երեխաների հաճախումները, պարապմունքների թեմատիկ պլանը՝ համապատասխան տույն ծրագրի 9-րդ կետում նշված ծրագրի վարվելու են ծրագրի 13-րդ կետում նշված հարթակի միջոցով, որին ԿԳՄՍ նախարարությունն ունենալու է ամբողջական հասանելիություն՝ հնարավորություն ստանալով դիտարկել երեխաների բացակայությունները, պարապմունքների բովանդակությունն ու համապատասխանությունը հաստատված ծրագրին:

15. Ծրագրի մոնիտորինգի նպատակով ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները կարող են իրականացնել նախապես չտեղեկացված այցեր ծրագրում ընդգրկված լողավազաններ՝ երեխաների մասնակցության, պարապմունքների բովանդակության, մարզիչների աշխատանքի և այլ հարցերը տեղում դիտարկելու համար:

16. Ծրագրի մոնիտորինգի արդյունքում ի հայտ բերված շեղումների, որակական խնդիրների, իրականությանը չհամապատասխանող տվյալների հայտնաբերման դեպքում դրամաշնորհ ստացած կազմակերպության հետ

պայմանագիրը դադարեցվում է:

17. 3-րդ պատանեկան կարգի նորմատիվային պահանջները լրացրած երեխաների մարզումները նախատեսվում է շարունակել այլ ծրագրով:

3. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

18. Փորձնական ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերից՝ նվազագույնը 1 տարի ժամկետով, առավելագույնը՝ 3 տարի ժամկետով:

4. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԸ

19. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ թվում՝ 2024 և 2025 թվականների համար ծրագրի իրականացմանն անհրաժեշտ ծախսերը կնախատեսվի իրականացնել ԿԳՄՍ նախարարության միջոցների հաշվին:

20. Իրավաբանական անձանց վճարումները նախատեսվում է իրականացնել եռամսյակային կտրվածքով՝ երեխաների փաստացի հաճախումների արդյունքների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ